ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

16 հուլիսի հինգշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

94
(3303)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՆՈՐ ՓՈՒԼ Է ԹԵՎԱԿՈԽՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ քաղաքապետարանում ակտիվ խոսակցություններ են շրջանառվում, որ առաջիկայում պաշտոնից կազատվի նաեւ Նոր Նորք վարչական շրջանի ղեկավար Մարատ Սեւոյանը: Ըստ քաղաքապետարանում տարածված տեղեկությունների՝ Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի պաշտոնում նախատեսվում է նշանակել Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի մատակարարման եւ տեխնիկական սպասարկման վարչության պետ Սեւակ Մելքոնյանին: Ի դեպ, Սեւակ Մելքոնյանի հայրը՝ Կարեն Մելքոնյանը, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի տեղակալն է:

Սակայն կադրային փոփոխություններն այսքանով չեն ավարտվում: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ ամենայն հավանականությամբ, սեփական դիմումի համաձայն պաշտոնից կազատվի նաեւ Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Վահան Պապիկյանը: Քաղաքապետարանում շրջանառվող տեղեկությունների համաձայն՝ վերջինս նշել է, որ առողջական խնդիրների պատճառով հնարավոր է լքի համակարգը:

Այս իրավիճակին զուգահեռ քաղաքապետարանում ակտիվ քննարկումներ են ծավալվում նաեւ այն հարցի շուրջ, թե ինչ ճակատագիր է սպասվում նախկին այն պաշտոնյաներին, որոնք ներգրավված են տարբեր քրեական վարույթներում, որոնց լիազորությունները կասեցված են, եւ որոնց հետագա պաշտոնավարման հեռանկարն ամբողջությամբ կախված է դատական գործընթացներից: Ստեղծված իրավիճակում որեւէ մեկը չի կարող հստակ ասել՝ այդ պաշտոնյաները կվերադառնա՞ն համակարգ, թե՞ ոչ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Այս անգամ «Ժողովուրդ» օրաթերթի ուշադրության կենտրոնում է Սյունիքի մարզի Գորիսի համայնքի ղեկավար, ավագանու անդամ Առուշ Առուշանյանն է, որի հայտարարագրերը ցույց են տալիս, թե ինչպես են տարիների ընթացքում փոխվել նրա գույքն ու դրամական միջոցները: 2025 թվականի հայտարարագրի համաձայն՝ Առուշ Առուշանյանը ունի 4 անշարժ գույք՝ մեկ արտադրական նշանակության շինություն, մեկ դեռեւս պետական գրանցում չստացած շինություն եւ երկու հողամաս: Դրանցից արտադրական նշանակության շինությունն ու մեկ հողամասը ձեռք են բերվել 2017 թվականին, պետական գրանցում չստացած շինությունը՝ 2019 թվականի ապրիլի 19-ին գնման եղանակով, իսկ մյուս հողամասը՝ 2019 թվականի ապրիլի 15-ին նվիրատվությամբ: Հաշվետու տարվա ընթացքում նա նոր անշարժ գույք ձեռք չի բերել եւ որեւէ գույք չի օտարել: Տրանսպորտային միջոցների մասով նա շարունակում է հայտարարագրել 2016 թվականի սեպտեմբերի 22-ին ձեռք բերված ZIL մակնիշի բեռնատար ավտոմեքենան: Միաժամանակ, 2025 թվականի հայտարարագրում առաջին անգամ նշվել է, որ տարվա ընթացքում 90 եւ ավելի օր փաստացի տիրապետել է երրորդ անձին պատկանող 2022 թվականի արտադրության MERCEDES-BENZ մարդատար ավտոմեքենայի: Բանկային հաշվում տարվա սկզբին ունեցել է 95 հազար 498.5 դրամ, իսկ տարվա վերջում՝ 134 հազար 789 դրամ:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Օրեր առաջ «Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված՝ «Ֆինանսների նախարարին նվիրել են Լոնդոնի թռիչքի տոմս՝ մասնավոր ինքնաթիռով. «Ժողովուրդ»»» վերնագրով հոդվածը մեծ աղմուկ էր բարձրացրել: Բանն այն է, որ ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանի անունով հայտարարագրվել էր 567 հազար 463 դրամ գնահատված արժեքով նվեր՝ մասնավոր ինքնաթիռով թռիչք դեպի Լոնդոն: Նվերը տրամադրվել էր «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից՝ բանկի մայր ընկերության՝ Lion Finance Group-ի՝ Լոնդոնի ֆոնդային բորսայի առաջատար (FTSE 100) ինդեքսում ընդգրկվելու առիթով կազմակերպված միջոցառման շրջանակում: Քանի որ լուսաբանող նյութերում երեւում էր, որ նախարարին ուղեկցում է նաեւ ՀՀ ԿԲ նախագահ Մարտին Գալստյանը, «Ժողովուրդ» օրաթերթը գրավոր հարցումներ էր ուղարկել երկու գերատեսչություններին՝ պարզելու այս թանկարժեք եւ կասկածելի ուղեւորության, պաշտոնյաների կանանց ուղեկցության եւ լոնդոնյան գերթանկարժեք ընթրիքի մանրամասները: Եւ այսպես, ստացված պատասխաններն ավելի շատ նոր հարցեր են ծնում, քան փարատում կասկածները, հատկապես ֆինանսների նախարարության մասով:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ArmLur.am-ի իշխանական աղբյուրները փոխանցում են, որ «ճամպրուկային» տրամադրություն է նաեւ ՀՀ ֆինանսների նախարարությունում: Իշխանական մեր աղբյուրները փոխանցում են, որ Նիկոլ Փաշինյանը նպատակ ունի վերանշանակել միայն ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանին: ArmLur.am-ի լավատեղյակ աղբյուրները փոխանցում են, որ պաշտոնանկ կանեն ֆինանսների փոխնախարարներ Վահան Սիրունյանին, Արման Պողոսյանին, Ավագ Ավանեսյանին, Էդգար Մկրտչյանին: Մեր աղբյուրները նշում են, որ տեւական ժամանակ է, ինչ Նիկոլ Փաշինյանը դժգոհ է փոխնախարարների աշխատանքից, եւ նրանք վաղուց տեղյակ են եղել, որ լքելու են իրենց «աթոռները»: Ի դեպ, մենք տեղեկացանք, որ նախարարի մամուլի քարտուղար Ինգա Գալուստյանը եւս ազատման դիմում է ներկայացրել: Այժմ նախարարի մամուլի խոսնակ են փնտրում:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԿՈՐՑՆԵԼՈՎ ՀԱՅՐԵՆԻՔԸ՝ ԿՈՐՑՆԵԼՈՒ ԵՆՔ ԱՄԵՆ ԻՆՉ»

ArmLur.am-ը զրուցել է «Մայր Հայաստան» դաշինքի անդամ Սոնա Աղեկյանի հետ:

- Ինչպե՞ս եք գնահատում Անդրանիկ Թեւանյանի քաղաքական գործունեությունը:

- Անդրանիկ Թեւանյանը իմ ճանաչած քաղաքական եւ պետական այրերից Հայաստանի Հանրապետությանը նվիրված, թերեւս, ամենանվիրված քաղաքական գործիչներից մեկն է: Նա հիմնականում աչքի է ընկնում որպես ռուսամետ հայացքների կրող, սակայն իրականությունն այն է, որ Անդրանիկ Թեւանյանը ավելի շատ հայամետ է: Նա հասկանում է եւ գիտակցում է, իր գործունեությամբ նպաստում է, որպեսզի Հայաստանի Հանրապետությունը դառնա զարգացած երկիր, կարողանա լինել լիովին ինքնուրույն: Սակայն մենք հասկանում ենք, որ մեր տարածաշրջանում, լինելով փոքր պետություն եւ դեռեւս չունենալով բոլոր հնարավորությունները, որպեսզի լինենք ամբողջովին ինքնուրույն, պետք է ունենանք որոշակի դաշնակիցներ: Պատմությունը ցույց է տվել, որ դարերի ընթացքում մեր կողքին կանգնած է եղել Ռուսաստանը:

- Ինչպե՞ս եք գնահատում Հայաստանի ներկայիս արտաքին քաղաքական ուղղությունը:

- Այսօր մենք տեսնում ենք, որ Հայաստանի Հանրապետությունը փոխում է իր արտաքին քաղաքական ուղղվածությունը եւ ռուսական ազդեցության գոտուց գնում է դեպի Թուրքիայի ազդեցության գոտի: Իհարկե, բոլորս հասկանում ենք, որ Թուրքիայի ազդեցության տակ գտնվելով՝ Հայաստանի Հանրապետությունը այլեւս չի լինելու ոչ ինքնիշխան, ոչ էլ ինքնուրույն պետություն: Հստակ է, որ Օսմանյան կայսրության երազանքը եղել է մեր տարածաշրջանը վերցնել իր տիրապետության տակ: Դրա վառ ապացույցը եղել է 1915 թվականը, դրանից առաջ տեղի ունեցած իրադարձությունները, ինչպես նաեւ վերջերս Արցախի էթնիկ զտումը:

- Ձեր կարծիքով ինչո՞ւ է Անդրանիկ Թեւանյանը դարձել իշխանությունների թիրախ:

- Անդրանիկ Թեւանյանի գործունեությունը, «Մայր Հայաստան» դաշինքի ձեւավորումը եւ ակտիվ պայքարը ակնհայտորեն դուր չեն գալիս Նիկոլ Փաշինյանի իշխանությանը: Նիկոլ Փաշինյանը հասկանում է, որ թիրախավորված է, եւ, իմ գնահատմամբ, որպես Թուրքիայի եւ Ադրբեջանի շահերը ներկայացնող գործիչ Հայաստանում, օգտագործում է իր ձեռքում եղած բոլոր լծակները: Անդրանիկ Թեւանյանը ոսկորի պես մնացել է Նիկոլ Փաշինյանի եւ նրա տերերի կոկորդին: Նրա քաղաքական ուղերձները, հստակ հռետորաբանությունը, ինչպես նաեւ մեր թիմի գործունեությունը ցույց են տալիս, որ փորձ է արվում հնարավորինս արագ որեւէ մեղադրանք գտնել եւ նրան ազատությունից զրկել: Քարոզարշավի ընթացքում նրա կալանավորումը նաեւ

նպատակ ուներ արատավորել նրա բարի եւ անբասիր համբավը:

- Ինչպե՞ս եք գնահատում Նիկոլ Փաշինյանի կառավարման տարիները:

- Մենք տեսել ենք, որ Նիկոլ Փաշինյանի կառավարման տարիներին պետական մակարդակով հնչած բազմաթիվ հայտարարություններ իրականում իրականացվել են հակառակ ձեւով: Ասվում էր՝ «Արցախը Հայաստան է եւ վերջ», սակայն Պրահայում ճանաչվեց Արցախը Ադրբեջանի կազմում: Նույնը կարելի է ասել նաեւ սոցիալական բազմաթիվ խոստումների մասին: Օրինակ՝ խոստանում էին վերացնել արագաչափերը, սակայն իշխանության գալուց հետո ոչ միայն չվերացրին, այլ ավելացրին, բարձրացրին հարկերն ու տուրքերը: Այսօր անգամ անչափահաս երեխան, եթե ավտոբուսում օգտվում է ծնողի բանկային քարտից, կարող է տուգանվել: Սա է այս իշխանության իրական դեմքը:

- Ինչո՞ւ, ըստ Ձեզ, անհրաժեշտ էր արատավորել Անդրանիկ Թեւանյանի հեղինակությունը:

- Անդրանիկ Թեւանյանի անբասիր քաղաքական կեցվածքը պետք էր արատավորել, որովհետեւ քարոզարշավի ընթացքում «Մայր Հայաստան» դաշինքի վարկանիշը գնալով աճում էր: Սա պետք էր կանգնեցնել, որովհետեւ լուրջ վտանգ էր սպառնում ՔՊ իշխանությանը: Եթե այդ իշխանությունը չվերարտադրվեր, Հայաստանի Հանրապետությունը կմնար Հայաստանի Հանրապետություն եւ չէր իրականացվի թուրք-ադրբեջանական տանդեմի երազանքը: Հենց այս նպատակով էլ փորձեցին արատավորել Անդրանիկ Թեւանյանին:

- Ինչպե՞ս եք գնահատում Անդրանիկ Թեւանյանին առաջադրված մեղադրանքները, այդ թվում՝ 622 հազար դոլարի վերաբերյալ գործը:

-Իրավապահ համակարգը երկու օր չէր կարողանում հասկանալ, թե ինչ գործ պետք է կազմեր, որպեսզի իրականացներ իրեն տրված քաղաքական հրամանը: Այդ ընթացքում շրջանառության մեջ դրվեց 622 հազար դոլարի մասին պատմությունը՝ իբրեւ պետական դավաճանության դրվագ: Սակայն պետք է նշել, որ այն ժամանակահատվածում Անդրանիկ Թեւանյանն արդեն Ազգային ժողովի պատգամավոր չէր, իսկ Արեգնազ Մանուկյանը երբեւէ չի ունեցել պետական գաղտնիք պարունակող փաստաթղթերի հասանելիություն: Եթե նիստը, որի մասին խոսում են, իսկապես գաղտնի լիներ, ապա նա չէր կարող մասնակցել դրան: Ավելին՝ նույն նիստին ներկա եղած անձինք, այդ թվում՝ Միեր Գրիգորյանը, հայտարարել են, որ այնտեղ որեւէ գաղտնի տեղեկատվություն չի քննարկվել: Հետեւաբար հարց է առաջանում՝ ո՞ր գաղտնի փաստաթուղթն է փոխանցվել եւ ո՞ւմ:

- Եթե, այնուամենայնիվ, մեղադրանքն ապացուցվի, պատրա՞ստ եք ներողություն խնդրել:

- Ես լիարժեքորեն եւ անվերապահորեն վստահում եմ Անդրանիկ Թեւանյանին եւ վստահ եմ, որ որեւէ պետական գաղտնիք պարունակող փաստաթուղթ նա երբեւէ որեւէ երրորդ անձի չի փոխանցել: Վստահ եմ դրանում այնպես, ինչպես վստահ եմ, որ ինքս էլ նման բան երբեք չէի անի: Վստահ եմ, որ նման փաստաթուղթ չի փոխանցվել, եւ նրանք, ովքեր այսօր փորձում են արատավորել մեր առաջնորդի բարի համբավը, վաղ թե ուշ իրենք են ներողություն խնդրելու:

- Ի՞նչ վտանգներ եք տեսնում Հայաստանի համար:

- Այսօր անհրաժեշտ են փոփոխություններ, որպեսզի Հայաստանը մնա Հայաստանի Հանրապետություն: Հակառակ դեպքում մի օր կարող ենք արթնանալ եւ տեսնել մի փաստաթուղթ, որով Հայաստանը ներկայացված կլինի որպես թուրքական վիլայեթ կամ «Արեւմտյան Ադրբեջան»: Այդ նարատիվը տարիներ շարունակ առաջ է տանում Ադրբեջանը պետական մակարդակով, եւ ցավոք, Հայաստանի իշխանությունները համարժեք չեն արձագանքում այդ գործընթացներին:

- Ինչպե՞ս եք գնահատում Արեգնազ Մանուկյանի կալանավորումը:

- Ընդդիմադիր ուժերի մեծ մասը գնահատել է Արեգնազ Մանուկյանի կալանավորումը որպես քաղաքական հետապնդում: Նա կին քաղաքական գործիչ է, ունի անչափահաս երեխա, երբեւէ չի խուսափել քննությունից, ներկայացել է բոլոր կանչերին, համագործակցել է իրավապահների հետ եւ որեւէ կերպ չի խոչընդոտել քննությանը: Այս պայմաններում կալանքը, մեր գնահատմամբ, քաղաքական ճնշման միջոց է եւ ուղղված է նաեւ Անդրանիկ Թեւանյանի վրա հոգեբանական ազդեցություն գործադրելուն:

- Ի՞նչ ակնկալիքներ ունեք ընդդիմադիր ուժերից եւ հանրությունից:

- «Մայր Հայաստան» դաշինքը այսօր առավել քան երբեւէ կուռ եւ միասնական է: Մենք պատրաստ ենք շարունակել մեր պայքարը՝ նույնիսկ եթե հերթով բոլորիս կալանավորեն: Մեր պայքարը պատվերով չէ, այլ հայրենիքը պահպանելու համար է: Կորցնելով հայրենիքը՝ կորցնելու ենք ամեն ինչ: Ուստի պայքարելու ենք, որպեսզի Հայաստանի Հանրապետությունը մնա անկախ, ինքնիշխան եւ հայկական պետություն:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՍԿՍՈՒՄ Է TRIPP-Ի ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Հայաստանի եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների միջեւ «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության եւ բարգավաճման» նախագծի՝ TRIPP-ի վերաբերյալ ռազմավարական համագործակցության շրջանակային համաձայնագրի վավերացման հարցն ընդգրկված է կառավարության հուլիսի 16-ի նիստի օրակարգում:

Չզեկուցվող նախագծով առաջարկում է հավանություն տալ համաձայնագիրը վավերացնելու մասին օրենքի նախագծին:

Շրջանակային համաձայնագիրը ստորագրվել է 2026 թվականի հունիսի 1-ին Վաշինգտոնում եւ հունիսի 4-ին Երեւանում: Կառավարության որոշման նախագծով նախատեսվում է դիմել Սահմանադրական դատարան՝ պարզելու համաձայնագրում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը երկրի Սահմանադրությանը: Եթե Սահմանադրական դատարանը պարտավորությունները ճանաչի Սահմանադրությանը համապատասխանող, ապա կառավարության օրենսդրական նախաձեռնությունը սահմանված կարգով կփոխանցվի Ազգային ժողով:

Սահմանադրական դատարանում կառավարության ներկայացուցչի լիազորությունները կստանձնի արտաքին գործերի նախարարի տեղակալ Վահան Կոստանյանը:

Ըստ նախագծի հիմնավորման՝ այս օրենքի ընդունումը թույլ կտա ապահովել TRIPP-ի վերաբերյալ Հայաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ ռազմավարական համագործակցության շրջանակային համաձայնագրի ուժի մեջ մտնելու անհրաժեշտ ընթացակարգերը: Օրենքի նախագիծը պատրաստվել է Հայաստանի արտաքին գործերի նախարարության կողմից եւ բխում է ԱՄՆ-ի հետ հարաբերությունները բազմակողմանիորեն զարգացնելու Կառավարության առաջնահերթություններից:

ԿՀԵՌԱՆԱ ՆԱԵՎ ՏԵՂԱԿԱԼԸ

ArmLur.am-ի լավատեղյակ աղբյուրները փոխանցում են, որ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Մխիթար Հայրապետյանի հետ նախարարությունից կհեռանա նաեւ նրա տեղակալը՝ Գեւորգ Մելիքսեթյանը:

ArmLur.am-ի իշխանական աղբյուրների փոխանցմամբ՝ Հայրապետյանի ամենավստահելի մարդկանցից է Մելիքսեթյանը, ով Հայրապետյանի որոշումից անմիջապես հետո հայտարարել է, որ ինքը եւս հրաժարական կտա:

Գրել էինք, որ ArmLur.am-ի տեղեկություններով՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Մխիթար Հայրապետյանի միջեւ վերջին շրջանում լուրջ տարաձայնություններ են առաջացել:

ArmLur.am-ի աղբյուրների փոխանցմամբ՝ վարչապետը դժգոհություն է հայտնել նախարարից՝ կապված IMEI միասնական համակարգի ներդրման նախաձեռնության հետ:

Ս. Գ.

ՄԵՂԱԴՐԱՆՔ

Գարուն Ալիկի Միրզոյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2010 թվականի մարտի 26-ին, զբաղեցնելով ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավարի պաշտոնը, հանդիսանալով պաշտոնատար անձ, իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով, այլ պաշտոնատար անձի հետ հանցակցությամբ, անձնական եւ խմբային շահերից ելնելով՝ օրենքով սահմանված արգելքին հակառակ, հաստատել է Ծաղկաձոր համայնքի ավագանու որոշմամբ նույն համայնքում գտնվող՝ օտարման ոչ ենթակա հողատարածքի օտարման վերաբերյալ ավագանու որոշման նախագիծը, ինչից հետո կազմակերպել է կեղծ աճուրդ, կեղծել է պաշտոնեական փաստաթուղթ եւ օտարել է օտարման ոչ ենթակա հողատարածքը:

Հովհաննես Էմմիկի Մկրտչյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2010 թվականի մարտի 26-ին, զբաղեցնելով ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնը, հանդիսանալով պաշտոնատար անձ, իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով, այլ պաշտոնատար անձի հետ հանցակցությամբ, անձնական եւ խմբային շահերից ելնելով՝ օրենքով սահմանված արգելքին հակառակ, կազմակերպել է կեղծ աճուրդ, կեղծել է պաշտոնեական փաստաթուղթ եւ օտարել է օտարման ոչ ենթակա հողատարածքը:

Լաուրա Անդրուշայի Եփրեմյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա միջոցներ տրամադրելու եղանակով օժանդակել է ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավար Գարուն Միրզոյանին եւ վերջինիս տեղակալ Հովհաննես Մկրտչյանին՝ իրենց պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելուն՝ օրենքով սահմանված արգելքին հակառակ հողատարածքի օտարման համար կեղծ աճուրդ կազմակերպելուն, պաշտոնեական փաստաթուղթ կեղծելուն, ինչպես նաեւ օգտագործել է կեղծ փաստաթուղթ:

Ք. Մ.

ԻՐԱՎԻՃԱԿ

ԳԻՇԵՐԸ ՀԱՐՎԱԾՆԵՐ Է ՀԱՍՑՐԵԼ ՄԻ ՇԱՐՔ ՄԱՐԶԵՐԻ

Երեքշաբթի գիշերը ռուսական զորքերը հարձակվել են Ուկրաինայի մի քանի մարզերի վրա: Հարվածներ են հասցվել, ի թիվս այլ վայրերի, Կիեւին: Ուկրաինայի մայրաքաղաքի քաղաքապետ Վիտալի Կլիչկոն հայտնել է, որ Գոլոսեեւսկի շրջանում այրվել են պահեստային տարածքներ, Դարնիցկի շրջանում՝ ավտոմեքենաներ: Բացի այդ, Դարնիցկի շրջանի դպրոցներից մեկում տարածքում ընկած անօդաչու թռչող սարքի հետեւանքով կոտրվել են պատուհանները: Տուժածների մասին տեղեկություններ չկան:

Չեռնիգովի մարզի Նեժինի շրջանում ռուսական հարձակման հետեւանքով այրվել է մասնավոր բնակելի տուն, տուժել է երկու կին: Նրանց, ըստ Արտակարգ իրավիճակների պետական ծառայության, տեղափոխել են տեղի հիվանդանոց:

Դնեպրոպետրովսկի մարզային ռազմական վարչակազմի (ՄՌՎ) ղեկավար Ալեքսանդր Գանժան հայտնել է, որ Սինելնիկովոյի շրջանում վնասվել են ԱԶԿ-ն, մասնավոր տուն եւ ավտոմեքենաներ: Ռուսական գնդակոծության հետեւանքով երկու մարդ զոհվել է, եւս չորսը՝ տուժել: Նիկոպոլի շրջանում վնասվել են ագրոֆիրմա, մասնավոր տներ եւ տնտեսական շինություն, Կամենսկոյեի շրջանում՝ գյուղատնտեսական ձեռնարկություն եւ ենթակառուցվածքներ:

Զապորոժիեի մարզի Օրեխովոյի շրջանի Տավրիչեսկոյե գյուղում երեքշաբթի առավոտյան ռուսական FPV-դրոնը հարվածել է քաղաքացիական ավտոմեքենայի: Զապորոժիեի ՄՌՎ-ի ղեկավար Իվան Ֆեդորովի տեղեկատվությամբ՝ մեքենայում գտնվող կինը զոհվել է, 60-ամյա տղամարդը վիրավորվել է:

Օդեսայի մարզում, ՄՌՎ-ի ղեկավար Օլեգ Կիպերի տեղեկատվությամբ, վնաս է հասցվել քաղաքացիական եւ արդյունաբերական ենթակառուցվածքներին: Ձեռնարկություններից մեկի տարածքում վնասվել են ավտոնորոգման արհեստանոցների շենքերը, տնտեսական շինությունը, վառելիքատար մեքենան, 11 բեռնատար եւ մեկ մարդատար ավտոմեքենա: Մեկ այլ ձեռնարկությունում այրվել են արեւածաղկի ձեթի պահեստարաններ: Նախնական տեղեկություններով՝ ոչ ոք չի տուժել:

Խարկովի մարզի Սոլոնիցեւկա ավանում ռուսական գնդակոծության հետեւանքով տուժել է վեց մարդ, այդ թվում՝ 11-ամյա մի աղջիկ, հայտնել է ՄՌՎ-ի պետ Օլեգ Սինեգուբովը:

Ռուսաստանի պաշտպանության նախարարությունը հայտարարել է, մասնավորապես, Կիեւում ռազմական արդյունաբերության ձեռնարկությունների եւ Օդեսայի Յուժնի նավահանգստում վառելիքաքսուկային նյութերի բեռնաթափման եւ պահպանման օբյեկտների խոցման մասին: Ուկրաինան դեռեւս չի մեկնաբանել ռուսական ռազմական գերատեսչության հայտարարությունը:

ԻՆՉ Է «ԿՈՒՏԱԿԵԼ»

ՄԱՆԴԱՏ ՉԻ ՈՒԶԵԼ, ՄԱՐԶՊԵՏ ԿՄՆԱ

Շիրակի մարզպետ, ԲՊ-ական Դավիթ Առուշանյանը օրերս հայտարարեց, որ հրաժարվել է Ամ պատգամավորի մանդատից եւ շարունակելու է պաշտոնավարել որպես Շիրակի մարզպետ:

Դավիթ Առուշանյանը Շիրակի մարզպետի պաշտոնը զբաղեցնում է 2024 թվականի դեկտեմբերի 19-ից: Մինչ այդ նա եղել է Գյումրու համայնքի ղեկավարի տեղակալ, իսկ 2022 թվականի հոկտեմբերից՝ Ազգային ժողովի պատգամավոր:

Նրա 2021-2025 թվականների հայտարարագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս տարիներին գույքային կառուցվածքը գրեթե չի փոփոխվել. պահպանվել են նույն անշարժ գույքերը, նվազել է ավտոմեքենաների թիվը, իսկ հիփոթեքային պարտավորությունը տարեցտարի կրճատվել է:

Երկու բնակարան, ավտոկայանատեղի եւ Գյումրիում օգտագործվող բնակարան

2025 թվականի տարեկան հայտարարագրի համաձայն՝ Դավիթ Առուշանյանը համատեղ սեփականության իրավունքով հայտարարագրել է երեք անշարժ գույք.

բնակարան Երեւանի Դավթաշեն վարչական շրջանում, ձեռք բերված 2014 թվականի հունվարի 14-ին,

բնակարան Երեւանի Կենտրոն վարչական շրջանում, ձեռք բերված 2014 թվականի հոկտեմբերի 22-ին,

ավտոկայանատեղի Երեւանի Կենտրոն վարչական շրջանում, ձեռք բերված 2014 թվականի նոյեմբերի 18-ին:

Միաժամանակ նա նշել է, որ տարվա ընթացքում ավելի քան 90 օր փաստացի տիրապետել է Գյումրիում գտնվող բնակարանի, որը սեփականության իրավունքով իրեն չի պատկանում:

Նույն գույքային կազմը պահպանվել է նաեւ 2024, 2023, 2022 թվականների հայտարարագրերում, ինչպես նաեւ 2021 թվականի պաշտոնը ստանձնելու հայտարարագրում:

Nissan-ը վաճառվել է, մնացել է միայն Range Rover-ը

Տրանսպորտային միջոցների մասով փոփոխությունը տեղի է ունեցել 2024 թվականին:

2021-2023 թվականներին Առուշանյանը հայտարարագրել էր երկու ավտոմեքենա՝

2007 թվականի արտադրության Nissan,

2010 թվականի արտադրության Range Rover:

2024 թվականի մարտի 11-ին նա վաճառել է Nissan-ը՝ 3 միլիոն դրամով:

2025 թվականի դրությամբ նրա սեփականության ներքո մնացել է միայն 2010 թվականի արտադրության Range Rover-ը, որը ձեռք է բերել դեռեւս 2016 թվականին:

2021 թվականի հայտարարագրում նշված էր նաեւ, որ նա օգտագործում էր երրորդ անձին պատկանող 2012 թվականի արտադրության Ford ավտոմեքենա, որը հետագա հայտարարագրերում այլեւս չի ներկայացվել:

Կանխիկ միջոցները հիմնականում պահպանվել են

2025 թվականի հայտարարագրի համաձայն՝ մարզպետը կանխիկ ունեցել է՝

25 հազար ԱՄՆ դոլար,

10 միլիոն դրամ,

18 հազար եվրո:

2024 թվականի հայտարարագրում կանխիկ միջոցների նույն չափերն էին արձանագրված:

Եթե համեմատենք 2021 թվականի հետ, ապա դոլարային պահուստը նվազել է 37 հազարից մինչեւ 25 հազար դոլար, դրամական միջոցները՝ 12 միլիոնից մինչեւ 10 միլիոն դրամ, իսկ եվրոյով խնայողությունները աճել են 16 հազարից մինչեւ 18 հազար եվրո:

Բանկային հաշիվներում փոփոխություններն ավելի սահմանափակ են եղել: 2025 թվականին հիմնական հաշվին պահպանվել է 1,5 միլիոն դրամ մնացորդ, իսկ մեկ այլ հաշվին տարվա սկզբի 500 հազար դրամից տարեվերջին մնացել է 200 հազար դրամ:

Աշխատավարձն աճել է պաշտոնների փոփոխությանը զուգահեռ

2025 թվականին Դավիթ Առուշանյանի հայտարարագրված եկամուտը կազմել է 16 միլիոն 450 հազար 157 դրամ, որն ամբողջությամբ ստացվել է Շիրակի մարզպետի աշխատակազմից որպես աշխատավարձ:

Նախորդ տարիներին նրա եկամուտները կազմել են.

2024 թվական՝ 10 միլիոն 532 հազար 296 դրամ, որից 10,3 միլիոն դրամը՝ Ազգային ժողովից, 232 հազար դրամը՝ Շիրակի մարզպետի աշխատակազմից,

2023 թվական՝ 9 միլիոն 702 հազար 420 դրամ՝ ամբողջությամբ Ազգային ժողովից,

2022 թվական՝ 3 միլիոն 686 հազար 821 դրամ՝ Գյումրու համայնքապետարանից եւ Ազգային ժողովից,

2021 թվական՝ պաշտոնը ստանձնելու հայտարարագրում եկամուտ չէր ներկայացվել:

Հիփոթեքային պարտքը տարեցտարի նվազել է

Առուշանյանի հայտարարագրերը ցույց են տալիս, որ նրա հիմնական ֆինանսական պարտավորությունը հիփոթեքային վարկն է, որի մնացորդը յուրաքանչյուր տարի նվազել է:

2021 թվականին՝ շուրջ 30,7 միլիոն դրամ ընդհանուր պարտավորություն,

2022 թվականին՝ 67 հազար ԱՄՆ դոլար հիփոթեք,

2023 թվականին՝ շուրջ 23,5 միլիոն դրամ ընդհանուր պարտավորություն,

2024 թվականին՝ 52,4 հազար ԱՄՆ դոլար հիփոթեք եւ 250 հազար դրամ այլ պարտավորություն,

2025 թվականին՝ 41 հազար ԱՄՆ դոլար հիփոթեքային վարկ:

Միայն 2025 թվականի ընթացքում վարկի մարմանն ուղղվել է 11,4 հազար ԱՄՆ դոլար, որը հայտարարագրում համարժեք է շուրջ 4,2 միլիոն դրամի:

Բիզնես մասնակցություն չի հայտարարագրել

2021-2025 թվականների հայտարարագրերում Դավիթ Առուշանյանը չի նշել որեւէ մասնակցություն առեւտրային կազմակերպություններում, ինչպես նաեւ չի հայտարարագրել արժեթղթեր կամ ներդրումներ:

Շահերի հայտարարագրում նշված է միայն, որ նա հանդիսանում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ:

Ընդհանուր պատկերը

Վերջին հինգ տարիների հայտարարագրերը ցույց են տալիս, որ Դավիթ Առուշանյանի գույքային վիճակը էական փոփոխությունների չի ենթարկվել: Նրա սեփականության կազմում անփոփոխ մնացել են Երեւանում գտնվող երկու բնակարանն ու ավտոկայանատեղին, 2024 թվականին վաճառվել է Nissan մակնիշի ավտոմեքենան, պահպանվել է Range Rover-ը, իսկ հիմնական փոփոխությունները վերաբերում են աշխատավարձի աճին՝ պայմանավորված պաշտոնների փոփոխությամբ, եւ հիփոթեքային վարկի մնացորդի աստիճանական նվազմանը: Միեւնույն ժամանակ կանխիկ դրամական միջոցները տարիների ընթացքում պահպանվել են համեմատաբար կայուն մակարդակում:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՆԳՍՏԻ Է ՄԵԿՆՈՒՄ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի անվտանգության խորհրդի գրասենյակի ղեկավար Անահիտ Շիրինյանին ուղարկում են արձակուրդ: ArmLur.am-ի տեղեկություններով՝ Շիրինյանը շուրջ 10 օր կգտնվի արձակուրդում:

Հիշեցնենք, որ Անահիտ Շիրինյանը ղեկավարում է ՀՀ վարչապետի աշխատակազմի Անվտանգության խորհրդի գրասենյակը՝ համակարգելով գրասենյակի ընթացիկ աշխատանքները եւ ապահովելով անվտանգության խորհրդի գործունեության կազմակերպչական ու վարչական աջակցությունը:

Նշենք, որ Անահիտ Շիրինյանը տարիներ շարունակ աշխատել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգում: Ջբաղեցրել է տարբեր պաշտոններ ՀՀ կառավարության եւ վարչապետի աշխատակազմում: Ներգրավված է եղել անվտանգության, պետական կառավարման եւ իրավական ոլորտներին առնչվող աշխատանքներում: Ներկայում ղեկավարում է Անվտանգության խորհրդի գրասենյակը՝ կազմակերպելով խորհրդի գործունեության վարչական եւ կազմակերպչական ապահովումը:

2023 թվականի մայիսից զբաղեցնում է Անվտանգության խորհրդի գրասենյակի ղեկավարի պաշտոնը:

Ս. Գ.

ՈՂՋՈՒՆԵԼ Է

Հուլիսի 14-ին ՀՀ ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանն ընդունել է Հայաստանում ԵՄ նոր գործընկերության առաքելության պատվիրակությանը՝ ԵՄ արտաքին գործողությունների ծառայության քաղաքացիական գործողությունների հրամանատար եւ կառավարող տնօրեն Ստեֆանո Տոմատի գլխավորությամբ: Այս մասին տեղեկանում ենք քարտուղարի ֆեյսբուքյան էջից: «Ողջունել եմ առաքելության ստեղծումն ու տեղակայումը Հայաստանում՝ կարեւորելով վերջին տարիներին ԵՄ-ի կողմից Հայաստանին ցուցաբերվող բազմակողմ աջակցությունը, ինչպես նաեւ դիմակայունության ամրապնդմանն ուղղված կարողությունների զարգացման շուրջ իրականացվող միջոցառումները: Հանդիպման ընթացքում քննարկել ենք նաեւ հետագա համագործակցությանն առնչվող հարցեր, ինչի համատեքստում վստահություն եմ հայտնել, որ առաքելության եւ ՀՀ պետական մարմինների միջեւ սերտ համագործակցությունը կնպաստի առաքելության մանդատով նախատեսված խնդիրների լիարժեք եւ արդյունավետ իրականացմանը»,- նշել է նա:

ՄԵՂԱԴՐԱՆՔ

ՊՐՈՌԵԿՏՈՐԸ ՄԵՂԱԴՐՅԱԼ ՈՐԴՈՒ ՀԵՏ ԵԿԱՎ ԴԱՏԱՐԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը եկավ Հակակոռուպցիոն դատարան:

Հիշեցնենք, որ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսումնագիտական գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանի, նրա որդու եւ անվանի շախմատիստ Սմբատ Լպուտյանի քրեական գործը 2026թ. մայիսի 14-ին ուղարկվել է Հակակոռուպցիոն դատարան:

Մարիամ Իսպիրյանին մեղադրանք է առաջադրվել պաշտոնեական լիազորությունները ծառայության շահերին հակառակ օգտագործելու համար: Ըստ մեղադրանքի՝ նա 2022թ-ից զբաղեցրել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսումնագիտական գծով պրոռեկտորի պաշտոնը եւ միաժամանակ ղեկավարել համալսարանի «Շախմատ գիտահետազոտական ինստիտուտի» աշխատանքները:

Քննության տվյալներով՝ Իսպիրյանը տեղեկացված է եղել, որ իր որդին՝ Արմեն Ավետիսյանը, 2022թ. հունվարի 14-ին աշխատանքի է ընդունվել ինստիտուտում որպես մասնագետ, սակայն փաստացի աշխատանքի չի հաճախել՝ շարունակելով աշխատավարձ ստանալ:

Մեղադրանքի համաձայն՝ պրոռեկտորը որեւէ քայլ չի ձեռնարկել այդ իրավիճակը կանխելու համար, ինչի հետեւանքով համալսարանին պատճառվել է առանձնապես խոշոր չափի՝ մոտ 5 մլն 337 հազ. դրամի վնաս: Պրոռեկտորի որդուն էլ մեղադրանք է առաջադրվել խաբեությամբ առանձնապես խոշոր չափերի հափշտակություն կատարելու համար:

Ըստ նախաքննական մարմնի՝ նա 2022թ. հունվարի 14-ից մինչեւ 2026թ. փետրվարի 5-ը ձեւակերպված է եղել որպես «Շախմատ գիտահետազոտական ինստիտուտի» մասնագետ եւ պարտավոր է եղել ամեն օր ժամը 9-ից մինչեւ 18-ը աշխատանքի ներկայանալ, մասնակցել գիտական ու հետազոտական աշխատանքների, հաշվետվություններ ներկայացնել եւ ներգրավվել տարբեր մասնագիտական միջոցառումներում: Սակայն, ըստ մեղադրանքի, նա 4 տարվա ընթացքում աշխատանքի է հաճախել ընդամենը մի քանի օր եւ մի քանի ժամով, իսկ մնացած ժամանակահատվածում միայն ձեւականորեն է ներկայացվել որպես աշխատող՝ ստանալով ընդհանուր 5 մլն 337 հազ. դրամ աշխատավարձ: Քննության տվյալներով՝ այդ գումարը հափշտակվել է աշխատանքի պատշաճ կատարման կեղծ պատկեր ստեղծելու միջոցով:

Անվանի շախմատիստ Սմբատ Լպուտյանին մեղադրանք է առաջադրվել պրոռեկտորի որդու՝ Արմեն Ավետիսյանի կողմից ենթադրյալ հափշտակությանը օժանդակելու եւ պաշտոնեական կեղծիք կատարելու համար:

Ըստ մեղադրանքի՝ Լպուտյանը 2018թ-ից զբաղեցրել է մանկավարժական համալսարանի «Շախմատ գիտահետազոտական ինստիտուտի» տնօրենի պաշտոնը եւ պատասխանատու է եղել ինստիտուտի գործունեության կազմակերպման, աշխատակիցների աշխատանքի վերահսկման ու փաստաթղթաշրջանառության ճշգրտության համար: Քննության տվյալներով՝ նա տեղյակ էր եղել, որ Ա. Ավետիսյանը ձեւակերպված է եղել ինստիտուտում որպես մասնագետ, սակայն փաստացի աշխատանքի չի հաճախել՝ շարունակելով աշխատավարձ ստանալ:

Մեղադրանքի համաձայն՝ Լպուտյանը որեւէ միջոց չի ձեռնարկել այդ հանգամանքը կանխելու ուղղությամբ եւ, հակառակը, օժանդակել է Ավետիսյանին՝ աշխատանքի պատշաճ կատարման կեղծ պատկեր ստեղծելու միջոցով հափշտակել աշխատավարձի գումարը, ինչի հետեւանքով համալսարանին պատճառվել է առանձնապես խոշոր չափի գույքային վնաս: Բացի այդ, ըստ մեղադրանքի, Սմբատ Լպուտյանը պաշտոնական փաստաթղթերում կեղծ տեղեկություններ է ներառել՝ աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերում Արմեն Ավետիսյանին նշելով որպես աշխատանքի ներկայացած աշխատակից: Այդ տվյալները հաստատվել են նրա ստորագրությամբ:

Նշենք, որ Մարիամ Իսպիրյանը, վերջինիս որդին ու շախմատիստ Սմբատ Լպուտյանը ձերբակալվել էին 2026թ. ապրիլի 18-ին:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔԱՎՈՒԹՅԱՆ ՆՈՒԽԱՔ

ԿՐԱԿՈՑՆԵՐ ԱՐՁԱԿՈՂԻՆ ԿԱԼԱՆՔԻ ՉԵՆ ՏԱՆՈՒՄ

Երեկ Քննչական կոմիտեից ArmLur.am-ին հայտնեցին, որ Վաղարշյան փողոցում հնչած կրակոցների դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում 1 անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով (սպանության փորձը՝ մի խումբ անձանց կողմից) եւ 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (խուլիգանությունը՝ մի խումբ անձանց կողմից):

Նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան:

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ տեսանյութում կրակոց արձակողին կալանքի չեն տանում, այլ կալանքի են տարել միջադեպի մեկ այլ մասնակցի: Դատելով իրավապահ մարմինների հայտարարությունից՝ տպավորությունն այնպիսին է, որ միջադեպի մասնակիցները ենթարկվում են պատասխանատվության, իսկ գործը բացահայտված է, սակայն փաստացի քրեական վարույթով բազմաթիվ հարցեր շարունակում են կասկածելի թվալ:

Ի՞նչն է եղել Վաղարշյան փողոցի 24/6 շենքի բակում կրակոցների պատճառը: ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ մեքենաներ են բակի հատվածում վթարի ենթարկվել, եւ վթարի ենթարկված մեքենաների վարորդները դուրս են եկել ու սկսել են միմյանց մեղադրանքներ հնչեցնել, ճիշտ ու սխալի հարց բարձրացնել, հնչել են հայհոյանքներ, որից հետո բանը հասել է փայտով, քարով միմյանց հարվածելուն ու կրակոցներ արձակելուն:

Հիշեցնենք, որ shamshyan.com-ը հայտնել էր, որ հուլիսի 12-ին կրակոցներ են հնչել Երեւանում: Ժամը 19:20-ի սահմաններում տեղեկություններ են ստացվել, որ Վաղարշյան փողոցի 24/6 շենքի բակային հատվածում միջադեպ է տեղի ունեցել, որի ժամանակ հնչել են կրակոցներ, եւ կան վիրավորներ: Դեպքի վայրում հայտնաբերվել են կրակված պարկուճներ, գնդակ, վնասված ավտոմեքենաներ, մեկ այլ ավտոմեքենայի վրա էլ առկա է կրակոցի հետք, իսկ մեկ այլ ավտոմքենայի վրա՝ արնանման հետքեր, հայտնաբերվել է նաեւ կացինի պոչ, որի վրա կան արնանման հետքեր, գլխարկներ, հողաթափեր, որոնց վրա նույնպես առկա են արնանման հետքեր:

Դեպքի մասին ոստիկանության Արաբկիրի բաժնից տեղեկությունը փոխանցել են ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Արաբկիրի քննչական բաժին, որտեղից ժամանել է քննչական խումբը՝ բաժնի պետ Ազատ Դանիելյանի եւ օրվա պատասխանատու հերթապահ քննիչի գլխավորությամբ:

Քրեական գործով կա մեկ ձերբակալված:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԿԵԼ ԵՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԾԱՎԱԼԵԼՈՒՑ

Գլխավոր դատախազությունը, պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում իրականացրած ուսումնասիրությամբ պարզել էր, որ 2005 թվականի օգոստոսի 12-ին օրենքի խախտմամբ կազմակերպվել է «Սեւան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում գտնվող՝ հանգստի համար նախատեսված 2.5 հա մակերեսով հողատարածքի վարձակալության մրցույթ, որի հաղթող է ճանաչվել Կոտայքի նախկին մարզպետ Կարապետ Գուլոյանը:

Դատախազության կողմից ներկայացված վերոնշյալ առաջարկից հետո, Կոտայքի նախկին մարզպետ Կարապետ Գուլոյանի կամահայտնության արդյունքում, մինչեւ պայմանագրի գործողության ժամկետի ավարտը լուծվել է հողատարածքի վարձակալության պայմանագիրը: Այդ նպատակով՝ Կադաստրի կոմիտե են ներկայացվել համապատասխան դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը:

Արդյունքում, 2026 թվականի հուլիսի 10-ին ուժը կորցրած է ճանաչվել Կարապետ Գուլոյանի վարձակալության իրավունքի պետական գրանցումը. Հայաստանի Հանրապետության տիրապետմանն է վերադարձվել Սեւանի ափամերձ տարածքում գտնվող 2.5 հա մակերեսով հողատարածքը, որի շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը կազմում է 12 միլիոն 870 հազար դրամ:

Դատախազության նախաձեռնած ուսումնասիրությամբ պարզվել էր նաեւ, որ վարձակալության պայմանագրի համաձայն՝ հողի կադաստրային արժեքի փոփոխության դեպքում վարձատուն պարտավոր էր նախապես գրավոր տեղեկացնել վարձակալին, որից հետո վարձավճարը պետք է հաշվարկվեր նոր կադաստրային արժեքի հիման վրա: Մինչդեռ, 2021 թվականի հունվարի 1-ին՝ հողամասերի կադաստրային արժեքների աճի հիմքով վարձավճարների փոփոխության պայմաններում, վարձավճարների փոփոխության վերաբերյալ ծանուցումը վարձակալին ուղարկվել է 2024 թվականի հուլիսի 29-ին:

Արդյունքում, 2021 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2024 թվականի հուլիսի 29-ն ընկած ժամանակահատվածի համար չի հաշվարկվել եւ չի վճարվել շուրջ 2 միլիոն 432 հազար դրամ վարձավճար: Այս կապակցությամբ դատախազության կողմից ներկայացվել է հանցանքի մասին հաղորդում: Տեղեկացնենք նաեւ, որ նշված տարածքում այլ անձանց կողմից արձանագրվել են հողազավթման դեպքեր:

Ներկայում Դատախազությունը, համագործակցելով իրավասու պետական մարմինների հետ, հողն ապօրինի զավթումից ազատելու ուղղությամբ աշխատանքներ է իրականացնում:

● *Հայաստանի Հանրապետությունում հուլիսի 13-ից 14-ը բացահայտվել է թմրանյութի հայտնաբերման 4 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄՆԱՑ ԹՂԹԻ ՎՐԱ

Տավուշի սահմանամերձ Ոսկեպար, Ոսկեվան, Բաղանիս, Կիրանց գյուղերի բնակիչներին ԱԺ ընտրություններից առաջ՝այս տարվա մարտին, հայտնել են, որ առաջիկայում իրենց առանձնատների տանիքների շիֆերներով ծածկը փոխելու են, տեղադրվելու են նոր, մետաղաթիթեղյա ծածկեր: Գյուղերի վարչական ղեկավարներին սկզբից հայտնել են, որ փոխելու համար պետք է հաշվառել միայն առանձնատների ծածկի շիֆերների մակերեսը, սակայն հետո պահանջել են նաեւ տներին կից պահեստների, սարայների շիֆերների ծածկի ընդհանուր մակերեսի տվյալները: Այդ տվյալները ուղարկվել են Տավուշի մարզպետարան: Գյուղերում բնակիչներ կան, ովքեր որոշել էին սեփական միջոցներով փոխել իրենց տների ծածկը, սակայն լսելով, որ նման ծրագիր է իրականացվելու, սպասել են դրան: Բնակիչներին հայտնել են, որ շիֆերների մեջ ասբեստ կա, որը քաղցկեղածին է, ուստի շիֆերներով ծածկը պետք է փոխարինել թիթեղներով: Պատասխանելով տեղեկատվական հարցմանս՝ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը 2026թ. մարտի 19-ին հայտնել է, որ նախարարությունը մշակում է ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որով նախատեսվում է քննարկել ասբեստից պատրաստված տանիքների ծածկաթիթեղները փոխարինելու հարցը՝դիտարկելով անհատական բնակելի տների, ֆիզիկական եւ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող շենքերի ու շինությունների ասբեստից տանիքների փոխարինման աշխատանքների համար ներգրավված վարկերի տոկոսադրույքը սուբսիդավորելու հնարավորությունը, իսկ բազմաբնակարան շենքերի հին տանիքները սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում համաֆինանսավորելու հնարավորությունը: Նախնական հաշվառում, որոշակի հաշվարկներ իրականացնելու եւ ծրագրին նախնական գնահատական տալու նպատակով համապատասխան հանձնարարական է ուղարկվել մարզպետներին եւ հանձնարարվել է ՏԿԵ նախարարություն ներկայացնել տեղեկատվություն ասբեստից տանիք ունեցող բազմաբնակարան բնակելի շենքերի, անհատական բնակելի տների, ֆիզիկական եւ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող շենքերի եւ շինությունների եւ պետական եւ համայնքային սեփականություն հանդիսացող շենքերի վերաբերյալ: Նախարարությունից հայտնել են նաեւ, որ անհրաժեշտ ուսումնասիրությունների եւ քննարկումների ավարտից հետո միայն նախագիծը կշրջանառվի, եւ կհստակեցվեն ժամկետներն ու պայմանները: Հունիսի 22-ին ՏԿԵ նախարար Դավիթ Խուդաթյանին նոր հարցում եմ արել. «Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի տների, շինությունների ասբոշֆերյա ծածկերը հունիսի 19-20-ի կարկտահարությունից մեծապես վնասվել են, այդ ծածկերի փոխելու համար վերոհիշյալ ծրագիրը ե՞րբ կիրականացվի»: Հունիսի 29-ին ստացել եմ ՏԿԵ նախարարի տեղակալ Ավետիք Դարբինյանի պատասխանը. «ՀՀ կառավարության «Ասբեստից տանիքների փոխարինման «Առողջ տանիք» ծրագիրը հաստատելու մասին» որոշման նախագիծը գտնվում է քննարկման փուլում»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ

ՔՊ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՐՈՇՈՒՄ ԿԿԱՅԱՑՆԵՆ

ArmLur.am-ի լավատեղյակ աղբյուրները փոխանցում են, որ իշխանական կուլիսներում կադրային ակտիվ գործընթացներ են ընթանում:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ թեժ քննարկումների առանցքում Ազգային Ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների թեկնածուների ընտրության հարցն է:

ArmLur.am-ի իշխանական աղբյուրները փոխանցում են, որ հուլիսի 29-ին նախատեսված է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության նիստ, որի ընթացքում քննարկման հիմնական թեման լինելու է ԱԺ 12 մշտական հանձնաժողովների նախագահների թեկնածուների ընտրության հարցը:

Ըստ մեր տեղեկությունների՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանը ցանկանում է մինչեւ իր արձակուրդի ավարտը փակել այս հարցը՝ իշխանության ներսում վերջնականացնելով կադրային դասավորությունը եւ քաղաքական թիմին նախապատրաստելով Ազգային ժողովում սպասվող վարչապետի ընտրության գործընթացին:

ArmLur.am-ի աղբյուրների փոխանցմամբ՝ վարչության նիստում հերթով կներկայացվեն 12 հանձնաժողովների նախագահի թեկնածուները, կլսվեն նրանց ելույթները, որից հետո վարչությունը կկատարի իր ընտրությունը: Դրանից հետո արդեն թեկնածությունները կներկայացվեն Ազգային ժողով, որտեղ էլ տեղի կունենա նրանց պաշտոնական ընտրությունը:

Չի բացառվում, որ եթե մեկ նիստի ընթացքում չհաջողվի ավարտին հասցնել բոլոր քննարկումները, գործընթացը շարունակվի հաջորդ օրը:

Ըստ իշխանական մեր աղբյուրների՝ թեկնածուների առաջադրումները փաստացի արդեն ավարտված են, իսկ հիմնական քաղաքական որոշումները՝ կայացված: Սա նշանակում է, որ վարչության նիստն ավելի շատ լինելու է այդ որոշումների հրապարակային ձեւակերպման եւ վերջնական հաստատման փուլ, քան իրական մրցակցային ընտրություն:

Հանձնաժողովների նախագահների կազմը կարեւոր նշանակություն ունի ոչ միայն խորհրդարանի ընթացիկ աշխատանքի կազմակերպման, այլեւ առաջիկա քաղաքական գործընթացների տեսանկյունից, քանի որ հենց այդ պաշտոններն են ապահովում օրենսդրական օրակարգի կառավարումը եւ խորհրդարանական մեծամասնության ազդեցությունը առանցքային ոլորտների նկատմամբ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՋՐԿՎԵԼ ԵՆ ՕՐՎԱ ՀԱՑԸ ՎԱՍՏԱԿԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ

«Ինձ համար այս օրերին ամենացավալին այն է, որ ինձ հետ փոխկապակցված բոլոր ձեռնարկություններում մարդիկ զրկվել են աշխատանքի գնալու, իրենց օրվա հացը վաստակելու հնարավորությունից»,-գրված է «Երեւան-Կենտրոն» ՔԿՀ-ում կալանքի տակ գտնվող Գագիկ Ծառուկյանի ֆեյսբուքյան էջում:

«Շնորհակալություն եմ հայտնում հանրային գործիչների այն մեծ ու հեղինակավոր ցանկին, որոնք հանդես եկան ինձ աջակցող հայտարարությամբ: Նման քայլը երբեք չի մոռացվում:

Ձեզնից ոմանց հետ անձամբ եմ ծանոթ, ոմանց հետ եղել ենք Քրիստոսի արձանի շինհրապարակում, շատերիդ ծանոթ չեմ, բայց դա անպայման տեղի կունենա:

Անկեղծ ասած, առաջին միտքը, որ մոտս ծագեց ձեր հայտարարությունը լսելուց հետո, հետեւյալն էր. ինչպե՞ս կարող է մի ազգ ունենալ այսքան հանրահայտ, հեղինակավոր դեմքեր, իրենց ոլորտներում լուրջ հաջողության հասած մարդիկ, ու մեր երկիրը լինի այս վիճակում:

Մեր ժողովուրդը շատ մեծ պոտենցիալ ունի: Մենք կարող ենք մեջքներս ուղղել, մենք կարող ենք վերականգնել մեր ինքնավստահությունը, մենք աշխարհին շատ բան ունենք ասելու՝թե՛ մշակույթում, թե՛ գիտության մեջ, թե՛ սպորտում, բոլոր բնագավառներում:

Ինձ համար այս օրերին ամենացավալին այն է, որ ինձ հետ փոխկապակցված բոլոր ձեռնարկություններում մարդիկ զրկվել են աշխատանքի գնալու, իրենց օրվա հացը վաստակելու հնարավորությունից: Աշխատող, բարիք ստեղծող ձեռնարկությունները կանգնեցվել են. հասկանո՞ւմ եք, թե դա ինչպիսի հարված է բիզնեսի ամբողջական ոլորտների համար՝ երկրի կտրվածքով, եւ ինչպիսի հարված է արդար քրտինքով վաստակող, աշխատող մարդկանց համար: Իմ հանդեպ հարուցված անարդար գործը որեւէ առնչություն չունի այդ հիմնարկների հետ, բոլորը գիտեն, որ ես շատ վաղուց դուրս եմ եկել այդ ձեռնարկությունների կառավարումից, ոչ մի կապ չունեմ դրանց ընթացիկ հարցերի հետ, չեմ միջամտել աշխատանքներին: Այնուհանդերձ, բոլորին հասկանալի է նաեւ, որ այդ ձեռնարկությունների ապօրինի կասեցումն արվում է ինձ ցավ պատճառելու համար: Ես ուզում եմ հույս հայտնել, որ բանականությունն ի վերջո կվերականգնվի, եւ ի վերջո չեն խոչընդոտի այդ ձեռնարկությունների աշխատանքներին: Այս ձեռնարկություններն աշխատանքով են ապահովում հազարավոր մարդկանց, դրանց հետ առնչվում են տասնյակ հազարավոր այլ գործընկերներ, որոնց բիզնեսն այս ընթացքում նույնպես մեծապես տուժում է: Այս ամենը իրոք շատ մեծ վնաս է հասցնում եւԲ աշխատող քաղաքացիներին, եւԲ մեր երկրին ընդհանրապես:

Այս օրերին ես մտքով շատ հաճախ եմ լինում Քրիստոսի արձանի շինհրապարակում. ամեն քարը, ամեն աստիճանը, ամեն մետրն ինձ համար թանկ է ու կարեւոր: Վերջերս մտածում էի, որ ժամանակն է՝ ստեղծել արձանի բացման արարողության աշխատանքային խումբ: Պլանավորում եմ, որ ներկա կգտնվեն հեղինակավոր հյուրեր աշխարհի բոլոր ծայրերից, հանրահայտ դեմքեր, համաշխարհային հեղինակություն ունեցող գործիչներ, պաշտոնական պատվիրակություններ, իմ երկրի ու ժողովրդի բարեկամներ, տարբեր ազգերի ու կրոնների ներկայացուցիչներ: Ասեմ, որ արդեն իսկ ունեմ բազմաթիվ հեղինակավոր անձանց հավաստիացումները, որ բացմանը կգան մեր երկիր՝ տեսնելու աշխարհի նոր հրաշալիքը:

Այս ամենը պետք է մշակել, պլանավորել, քննարկել, բանակցել: Մի խոսքով, շատ գործ կա անելու: Աստծո կամոք, ամեն ինչ կարվի:

Ես ունեմ այն խոր, անխախտելի զգացողությունը, որ այդ արձանի կառուցումը մեր երկրի համար նոր, լուսավոր շրջան է բացելու:

Այդ արձանը մեր երկրի համար պետք է բացի նոր էջ, նոր հաջողություն: Այն պիտի դառնա մեր ներքին համերաշխության, ազգային վերածնունդի ու աշխարհին ներկայանալու մեր նոր խորհրդանիշը»:

● *Հանրապետությունում հուլիսի 13-ից 14-ը գրանցվել է զենք-զինամթերք կամավոր հանձնելու 4 դեպք:*

ԼՈՒՐԵՐ

ԾԵԾԿՌՏՈՒՔ

Հուլիսի 12-ին վիճաբանություն է տեղի ունեցել Արագածոտնի մարզում: Այդ օրը ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Աշտարակի բաժնում տեղեկություններ են ստացվել, որ նույն օրը՝ ժամը 16:40-ի սահմաններում, Ղազարավան համայնքի «Լանջաղբյուր» հանգստյան գոտում ջրելու հարցի շուրջ խոսակցություն է ծագել Երեւանի բնակիչ 53-ամյա Արտակ Ք.-ի, Արագածոտնի մարզի բնակիչ 48-ամյա Խաչիկ Մ.-ի եւ Կոտայքի մարզի բնակիչ 35-ամյա Ավագ Խ.-ի միջեւ, ինչից հետո Խաչիկ Մ.-ն իր հյուրերի հետ հեռացել է հանգստյան գոտուց: Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, նույն օրը՝ ժամը 21:30-ի սահմաններում, Խաչիկ Մ.-ն մի քանի անձանց հետ վերադարձել է հանգստյան գոտի եւ վիճաբանել Ավագ Խ.-ի, Արտակ Ք.-ի, Արագածոտնի մարզի բնակիչ 42-ամյա Արթուր Գ.-ի եւ 39-ամյա Ռաիսա Մ.-ի հետ: Վիճաբանության ընթացքում կողմերը միմյանց փոխադարձ հարվածներ են հասցրել, ինչի հետեւանքով Արտակ Ք.-ն, Ռաիսա Մ.-ն, Ավագ Խ.-ն եւ Արթուր Գ.-ն դեմքի ու մարմնի տարբեր հատվածներում ստացել են մարմնական վնասվածքներ: Վնասվել է նաեւ Ավագ Խ.-ին պատկանող «Kia» մակնիշի ավտոմեքենան:Գ. Շամշյանի տեղեկություններով՝ ոստիկանության Աշտարակի բաժնի ծառայողները միջոցառումներ են ձեռնարկում Խաչիկ Մ.-ի եւ նրա հետ հանգստյան գոտի ժամանած անձանց ինքնությունը պարզելու եւ նրանց հայտնաբերելու ուղղությամբ: «Kia» մակնիշի ավտոմեքենան տեղափոխվել է ոստիկանության Աշտարակի բաժնի հատուկ պահպանվող տարածք:

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է

Հուլիսի 14-ին ողբերգական դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 21:40-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Դավթաշենի բաժնում օպերատիվ տեղեկություն է ստացվել, որ Սասնա Ծռեր փողոցի շենքերից մեկի բակում դի կա: Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, դեպքի վայր է ժամանել ոստիկանության Դավթաշենի բաժնի օպերատիվ խումբը՝ բաժնի պետ Ջորիկ Ավդիշոեւի գլխավորությամբ: Ժամանել են նաեւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 4-րդ գումարտակի 2-րդ վաշտի պարեկները՝ գնդի հրամանատար Անդրանիկ Խաչատրյանի, գումարտակի հրամանատար Դավիթ Նիկողոսյանի եւ վաշտի հրամանատար Վլադիմիր Դերձյանի գլխավորությամբ: Տարածքը սահմանազատել են նույն վաշտի պարեկները: Տեղում պարզվել է, որ մահացածը Երեւանի բնակիչ 16-ամյա աղջիկ է, ով ըստ նախնական տեղեկությունների 6-րդ հարկից անզգուշաբար վայր է ընկել: Դեպքի մասին ոստիկանության Դավթաշենի բաժնից տեղեկությունը փոխանցել են ՀՀ Քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժին, որտեղից ժամանել է քննչական խումբը՝ բաժնի պետ Էդգար Բալոյանի եւ օրվա պատասխանատու հերթապահ քննիչի գլխավորությամբ: Դեպքի փաստով քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ, որտեղ էլ պարզվում են դեպքի հանգամանքները:

ԱՐԴՇԻՆԲԱՆԿ

Գ

ՎԵՐԱԳՈՐԾԱՐԿԵԼ Է SME ԹՎԱՅԻՆ ՀԱՐԹԱԿԸ

Արդշինբանկը շարունակում է ընդլայնել փոքր եւ միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) համար նախատեսված թվային ծառայությունները՝ վերագործարկելով SME թվային հարթակը՝ նորացված հնարավորություններով եւ կատարելագործված գործիքակազմով:



SME թվային հարթակի միջոցով ՓՄՁ-ները կարող են առցանց ներկայացնել հայտ եւ օգտվել ավտոմատ վարկավորման ծառայությունից: Լուծումը թույլ է տալիս կայացնել օպերատիվ որոշումներ, պարզեցնել գործընթացները եւ մեծացնել ֆինանսական միջոցների հասանելիությունը բիզնեսի զարգացման տարբեր փուլերում:

Ավտոմատ վարկավորումն առաջարկում է 20 մլն ՀՀ դրամ կամ կամ համարժեք արտարժույթ՝ մինչեւ 60 ամիս ժամկետով եւ հետեւյալ տարեկան՝ ՀՀ դրամ՝ 15%, ԱՄՆ դոլար՝ 14%, եվրո՝ 12.5% եւ փաստացի՝ ՀՀ դրամ՝ 16.08%, ԱՄՆ դոլար՝ 14.93%, եվրո՝ 13.24% տոկոսադրույքներով:

Վարկավորումը տրամադրվում է շրջանառու միջոցների համալրման, հիմնական միջոցների ձեռքբերման, կապիտալ ներդրումների իրականացման, ընթացիկ ծախսերի ֆինանսավորման եւ կրեդիտորական պարտքի մարման նպատակով:

«ՓՄՁ-ների համար ժամանակը որոշիչ գործոն է: Այդ պատճառով մենք տրամադրում ենք լուծումներ, որոնք ընկերություններին թույլ են տալիս արագ կողմնորոշվել ֆինանսավորման հարցերում եւ ընտրել իրենց նպատակներին համապատասխան տարբերակը: SME թվային հարթակի վերագործարկումը եւս մեկ քայլ է՝ բիզնեսներին ավելի հասանելի եւ ժամանակակից բանկային ծառայություններ առաջարկելու ուղղությամբ»,- նշում են Արդշինբանկում:

Արդշինբանկը, կարեւորելով բիզնեսների հաջողությունը, առաջարկում է նաեւ անհատական խորհրդատվություն: ՓՄՁ հաճախորդներին աջակցում են բանկի մասնագետները՝ օգնելով ընտրել այս կամ այն բիզնես նպատակին առավել համապատասխանող ֆինանսավորում:

ՓՄՁ ֆինանսավորման հնարավորությունների ընդլայնման նպատակով Արդշինբանկը համագործակցում է նաեւ միջազգային ֆինանսական կառույցների հետ: Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի հետ համագործակցության շրջանակում ներգրավված ֆինանսավորումը գերազանցում է 155 մլն ԱՄՆ դոլարը՝ներառելով մինչեւ 35% դրամաշնորհային բաղադրիչ: Եվրոպական ներդրումային բանկի հետ շուրջ 100 մլն եվրոյի համագործակցությունը եւս նպաստում է ՓՄՁ հատվածի երկարաժամկետ ֆինանսավորման հասանելիության ընդլայնմանը:

Միջազգային գործընկերների վստահության ու բանկի հետեւողական ռազմավարության արդյունքում այսօր Արդշինբանկն արդեն կայուն դիրք է զբաղեցնում Հայաստանի ՓՄՁ ֆինանսական շուկայում: Վերջին մեկ տարվա ընթացքում բանկի ՓՄՁ վարկային պորտֆելն աճել է գրեթե կրկնակի, եւ դինամիկան կայուն դրական զարգացում ունի: Սա վկայում է Արդշինբանկի՝ առաջատար դիրքերի շարունակական ամրապնդման մասին:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

ԼՈՒՐԵՐ

ԱՋԱՏՎԵԼ Է ՏՆԱՅԻՆ ԿԱԼԱՆՔԻՑ

Մյասնիկյան պողոտայում ավտոբուսի եւ ավտոմեքենայի վթարի հեղինակ, 19-ամյա Վարդան Մարկոսյանի խափանման միջոց տնային կալանքը փոխվել է:

«Անձի նկատմամբ որպես խափանման միջոց դատարանը կիրառել է վարչական հսկողություն՝ համացանցից օգտվելու սահմանափակումով, բացակայելու արգելք»,- այդ մասին լրատվամիջոցներին հայտնեցին Քննչական կոմիտեից:

Դատարանի որոշումը ՀՀ գլխավոր դատախազությունը բողոքարկելու է:

Հիշեցնենք, որ 19-ամյա երիտասարդը Երեւանում գերազանցել էր ավտոմեքենայի արագությունը, վթարային իրավիճակ ստեղծել եւ տեսանկարահանել իր գործողությունը:

Դատախազը հանրային քրեական հետապնդում էր հարուցել Վարդան Մարկոսյանի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի (Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթեւեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոնները խախտելը) 1-ին մասով, 297-րդ հոդվածի (խուլիգանությունը) 2-րդ մասի 3-րդ կետով եւ 344-րդ հոդվածի (Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված կամ այդ իրավունքը չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոցներ վարելը) 1-ին մասով:

Մայիսի 6-ին Համայնքային ոստիկանության Ավանի բաժնի ծառայողները 19-ամյա վարորդին հայտնաբերել, ձերբակալել եւ ներկայացրել էին նախաքննական մարմին:

ԿԱՍԵՑՎԵԼ Է

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից «ՆՆ հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող հացի արտադրամասում («88» Սուպերմարկետ, Լոռու մարզ, քաղաք Ստեփանավան Սուրբ Նշանի 46/3) իրականացված ստուգման ընթացքում պարզվել է, որ խախտվել են սահմանված սանիտարահիգիենիկ նորմերը, մասնավորապես՝

- արտադրական շինության պատերի մակերեւույթները պատրաստված չեն եղել անջրանցիկ, լվացվող, ախտահանվող նյութերից,
- առաստաղը պատրաստված է եղել փայտե, անհարթ, չլվացվող նյութերից, չի կանխարգելվել կեղտի կուտակումը, բորբոսի առաջացումը եւ մասնիկների թափվելու հնարավորությունը,
- սննդամթերքի արտադրության գործընթացում սննդամթերքի հետ շփման մեջ գտնվող գույքը, մասնավորապես՝ աշխատանքային սեղանները, պատրաստված է եղել փայտե, անհարթ, չլվացվող նյութերից,
- սննդամթերքի հետ շփման մեջ գտնվող պարագաները, մասնավորապես՝ հացաթխման համար օգտագործվող տապակները, չեն ենթարկվել պատշաճ մաքրման եւ ախտահանման:

Տեսչական մարմնի ղեկավարի որոշմամբ՝ հացի արտադրամասի արտադրական գործունեությունը կասեցվել է, սահմանվել է հայտնաբերված խախտումները շտկելու վերջնաժամկետ:

ԲԱԽՎԵԼ Է ՔԱՐԵ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ

Հուլիսի 15-ին ողբերգական ավտովթար է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 14:50-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Մաշտոցի բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Նորաշեն թաղամասի 14/61 հասցեում վթարված ավտոմեքենա կա, որի մեջ՝դի:

Ինչպես հայտնում է shamshyan.com-ը, օպերատիվորեն ժամանած Երեւանի 103 շտապօգնության բժիշկների հերթապահ խումբը արձանագրել է վարորդի մահը:

Ըստ նախնական տեղեկությունների՝ վարորդը «BMW»-ն վարելիս ունեցել է ինքնազգացողության վատացում, ինչից հետո ավտոմեքենայով բախվել է բնակչի քարե շինությանը:

Քննչական բաժինը պարզում է ավտոմեքենայի սեփականատիրոջ եւ մահացած վարորդի ինքնությունը:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՆԱԽԱՏՈՆԱԿԱՆ

ՓԱՐԻԶՈՒՄ ՇՔԵՂՈՒԹՅԱՄԲ ՆՇԵԼ Է

Համաշխարհային աստղ Ջենիֆեր Լոպեսը Փարիզում անցկացրել է նորաձեւությամբ եւ շքեղությամբ լի շաբաթ՝ մասնակցելով Haute Couture Fashion Week-ի ցուցադրություններին եւ նախապես նշելով իր 57-ամյակը, որը կնշի հուլիսի 24-ին:

Երգչուհուն եւ դերասանուհուն ուղեկցել են ընտանիքի անդամներն ու մտերիմ ընկերները, այդ թվում՝ նրա կրտսեր քույրը՝ Լինդա Լոպեսը: Տոնական օրերին Ջենիֆերը ներկայացել է մի շարք բացառիկ կերպարներով, որոնք ստեղծել են Stephane Rolland-ը, Zuhair Murad-ը, Tamara Ralph-ը եւ այլ հայտնի դիզայներներ:

Աստղի ամենատպավորիչ աքսեսուարները դարձել են Chopard-ի բարձր ոսկերչական հավաքածուի զարդերը: Ընդհանուր առմամբ Լոպեսը կրել է ավելի քան 400 կարատ ադամանդներով եւ թանկարժեք քարերով զարդեր, որոնք ընդգծել են նրա յուրաքանչյուր կերպարը:

Առաջին կերպարում նա ընտրել էր Stephane Rolland-ի սպիտակ բարձր օձիքով զգեստը՝ փքուն կիսաշրջազգեստով, որն ամբողջացրել էր Chopard-ի շքեղ վզնոցով, ականջօղերով եւ մատանիով: Զարդերի շարքում առանձնացել են ավելի քան 42 կարատ տանձաձեւ ռուբիններ եւ շուրջ 113 կարատ ադամանդներ:

Մեկ այլ երեկոյի համար Լոպեսը կրել է Zuhair Murad-ի բյուրեղներով պատված կիսաթափանցիկ զգեստ՝ փետրե թիկնոցով: Այդ կերպարը լրացրել են ադամանդներով եւ սպիտակ մարգարիտներով Chopard-ի ականջօղերը:

Հատուկ ուշադրության է արժանացել նաեւ Tamara Ralph-ի սեւ ժանյակավոր զգեստը՝ դասական հոլիվուդյան ոճով: Այն համադրվել է Chopard-ի տպավորիչ զարդերով, որոնց թվում եղել են շուրջ 190,55 կարատանոց ադամանդե վզնոց, 19,22 կարատանոց ականջօղեր, 73,69 կարատանոց ապարանջան եւ ադամանդներով զարդարված մատանի:

Լոպեսը ինստագրամում հրապարակել է իր կերպարների լուսանկարները՝ գրելով. «Այս զգացողությունը... Ծննդյան տոնակատարություններ Փարիզում: Շնորհակալ եմ Անաստասիային եւ Կլաուդիային՝ այս գեղեցիկ երեկոն կազմակերպելու համար: Շնորհակալություն Stephane Rolland-ին եւ Tamara Ralph-ին՝ տարիների ընթացքում ցուցաբերած աջակցության համար: Իսկ իմ սիրելի քույր Լինդային ցանկանում եմ ասել, որ «սիրում եմ քեզ» արտահայտությունը բավարար չէ նկարագրելու իմ զգացմունքները»:

PEOPLE-ի փոխանցմամբ՝ հուլիսի 8-ին երգչուհին ընտանիքի անդամների եւ ընկերների հետ ընթրել է Փարիզի Siena ռեստորանում: Թեեւ նրա ծննդյան օրը դեռ երկու շաբաթ հետո է, ռեստորանը անակնկալ կերպով կազմակերպել է տոնական շնորհավորանք՝ մատուցելով Chantilly ոճի տորթ՝ թարմ հատապտուղներով եւ բեզեով: Հյուրերը երգել են «Happy Birthday», իսկ Ջենիֆերը տորթը կիսել է նաեւ ռեստորանի այլ այցելուների հետ:

Ականատեսների խոսքով՝ ընթրիքից հետո երեկոն շարունակվել է կենդանի երաժշտության ներքո, իսկ Ջենիֆեր Լոպեսը բարձրացել է պարահրապարակ՝ վայելելով տոնական մթնոլորտը:

PEOPLE-ի մեկ այլ աղբյուր հայտնել է, որ դերասանուհին այս ամառ հանգստանում է Եվրոպայում՝ Netflix-ի իր վերջին ռոմանտիկ կատակերգության գովազդային շրջագայությունից հետո: Աղբյուրի խոսքով՝ Լոպեսը հիանալի տրամադրություն ունի, մեծ հաճույքով մասնակցում է Փարիզի նորաձեւության շաբաթվա միջոցառումներին եւ լիարժեք վայելում է եվրոպական ամառը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՆՇԵԼ Է ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՊԱՏՃԱՌԸ

Ֆրանսիայի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Դիդիե Դեշամը մեկնաբանել է աշխարհի առաջնության կիսաեզրափակիչում Իսպանիայից կրած պարտությունը (0-2), գրում է armsport-ը: «Ֆուտբոլիստները հոգեպես ջախջախված են, բայց պետք է օբյեկտիվ լինել. մենք զիջեցինք տեխնիկական առումով: Դա մեր պատասխանատվությունն է: Ես մի հարց կտամ եւ չեմ պատասխանի դրան. արդյո՞ք այս մրցավարն ունի անհրաժեշտ մակարդակ աշխարհի առաջնության կիսաեզրափակչում աշխատելու համար:

Շատ վիճելի դրվագներ կային, բայց պարտության գլխավոր պատճառն այն է, որ մենք ավելի վատն էինք: Մենք տեխնիկական սխալներ թույլ տվեցինք, կային փոխանցումներ, որոնք կարող էին վտանգավոր պահերի հանգեցնել: Ֆուտբոլի բարձրագույն մակարդակում դա հատկապես ցավալի է:

Ինձ թվում էր, թե թիմը լավ է վերականգնվել խաղից առաջ... Ընդ որում, ես չեմ նսեմացնում Իսպանիայի հավաքականի արժանիքները. նրանք ամբողջությամբ վերահսկում էին խաղը եւ արժանիորեն հաղթեցին: Այժմ մենք պետք է խաղանք երրորդ տեղի համար: Չեմ ցանկանում խաչ քաշել այն ամենի վրա, ինչ արվել է մինչ այս, բայց հենց այս հանդիպումում Իսպանիան ավելին ցույց տվեց:

Հիմա ես իմ մասին չեմ մտածում: Ես այս խաղին նախապատրաստվել եմ ֆուտբոլիստների հետ միասին, մեր նպատակն էր անել հնարավոր ամեն ինչ եզրափակիչ դուրս գալու համար: Մեզ դա չհաջողվեց: Մեր հիասթափությունը հսկայական է»,- Դեշամի խոսքերը մեջբերում է L'équipe պարբերականը:

ՍՊԵՐՑՅԱՆԸ ԵՐԳԵԼ Է

Հայաստանի ազգային հավաքականի կիսապաշտպան Էդուարդ Սպերցյանը, որը վերջերս է տեղափոխվել Սաուդյան Արաբիան ներկայացնող «Ալ-Ահլի», մասնակցել է թիմի նորեկների համար նախատեսված ավանդական արարողությանը, հայտնում է armsport-ը:

Ակումբում գործող ավանդույթի համաձայն նորեկները պետք է երգեն խաղընկերների համար: Սպերցյանն աթոռի վրա կանգնած կատարել է Michel Telg-ի հայտնի «Ai Se Eu Te Pego» երգը, ինչը մեծ ոգեւորությամբ է ընդունվել թիմակիցների կողմից:

Հիշեցնենք, որ «Կրասնոդարից» հայ կիսապաշտպանի տրանսֆերի դիմաց սաուդյան ակումբը վճարել է 25 միլիոն դոլար: Նոր թիմում ֆուտբոլիստը կվաստակի տարեկան 6 միլիոն եվրո աշխատավարձ առանց հնարավոր հավելավճարների ու բոնուսների:

Սպերցյանն ընդամենը մեկ շաբաթ առաջ է միացել «Ալ-Ահլիին» եւ արդեն ընկերական խաղում հասցրել է դառնալ գոլի հեղինակ:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանն ընդունել է Հայաստանում Էստոնիայի դեսպան Մարգ Մարդիսալու-Կահարին եւ Էստոնիայի միջազգային զարգացման կենտրոնի (ESTDEV) ներկայացուցիչներին:

Քննարկվել են մասնագիտական կրթության եւ ուսուցման ոլորտում ընթացիկ բարեփոխումները, հմտությունների զարգացման, աշխատաշուկայի կարիքների վերաբերյալ համատեղ ծրագրերի իրականացմանը եւ համագործակցության զարգացմանը վերաբերող հարցեր:

Արաքսիա Սվաջյանը ողջունել է հյուրերին՝ ընդգծելով, որ մասնագիտական կրթության եւ ուսուցման ոլորտում ներկայում ակտիվ բարեփոխումներ են ընթանում եւ Էստոնիայի փորձը կարող է օգտակար լինել:

«Շարունակաբար ուսումնասիրում ենք միջազգային փորձը՝ այն հնարավորինս տեղայնացնելու եւ ըստ մեր կարիքների կիրառելու նպատակով: Այս համատեքստում անչափ կարեւոր է նաեւ Էստոնիայի մեր գործընկերների հետ փորձի փոխանակումը եւ արդյունավետ մոդելների ուսումնասիրումը»,- ասել է ԿԳՄՍ նախարարի տեղակալը:

Նա գործընկերներին իրազեկել է, որ ընդունվել է «Մասնագիտական կրթության եւ ուսուցման մասին» նոր օրենքը՝ որպես ոլորտը կարգավորող հիմնարար փաստաթուղթ: Նոր օրենքով միջին մասնագիտական կրթության ոլորտի զարգացման համար առանցքային ուղղություն է դիտվում աշխատանքի վրա հիմնված կրթության կազմակերպումը, ոլորտում դասավանդողների մասնագիտական վերապատրաստումները եւ կառավարման արդյունավետության բարելավումը:

Անդրադառնալով համագործակցությանը՝ նշվել է, որ Էստոնիայի քաղաքացիական հասարակության, պետական հաստատությունների եւ մասնավոր հատվածի փորձագետների հետ համագործակցությամբ Էստոնիայի միջազգային զարգացման կենտրոնը (ESTDEV) մշակում է գործընկեր երկրների կարիքներին համապատասխանող նորարարական լուծումներ, եւ Հայաստանը եւս դիտարկվում է որպես գործընկեր երկիր: Քննարկվել են նաեւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողների եւ շրջանավարտների շարժունությանը, փորձի փոխանակմանը եւ համագործակցության ընդլայնմանն առնչվող մի շարք այլ հարցեր:

● *Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում հուլիսի 18-ին՝ ժամը 12:00-ին, կկայանա «Առյուծն ու խաղալիքը» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ո՞r դեպքերում կարող է իմ նկատմամբ կատարողական վարույթ հարուցվել, որո՞նք են հարկադիր կատարման ենթակա ակտերը:

Արմենուհի Սիմոնյան, 54 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Հարկադիր կատարողը որոշում է կայացնում կատարողական վարույթ հարուցելու (վերսկսելու) մասին՝ պահանջատիրոջից (նրա ներկայացուցչից) հարկադիր կատարման դիմում ներկայացնելուց հետո 3-օրյա ժամկետում, իսկ անհապաղ կատարման ենթակա ակտերի հարկադիր կատարման դիմումի հիման վրա՝ անհապաղ, եթե բացակայում են կատարողական վարույթի հարուցումը (վերսկսումը) մերժելու հիմքերը, իսկ հարկադիր կատարողի որոշումների կատարման վարույթով հարկադիր կատարողը վարույթ է հարուցում սեփական նախաձեռնությամբ (Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքի 31-րդ, 37-րդ, 50-րդ հոդվածներ):

Հարկադիր կատարման ենթակա ակտերը սահմանված են «Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով. դրանք են՝

1) քաղաքացիական, սնանկության եւ վարչական գործերով կատարում ենթադրող եզրափակիչ դատական ակտերը,

2) քրեական գործերով դատական ակտերը՝ գրավը պետության եկամուտ դարձնելու, տուգանքների, գույքային բռնագանձումների, հաշտության համաձայնությունը հաստատելու, գույքի բռնագրավման եւ գույքի արգելադրման մասով,

3) Սահմանադրական դատարանի եւ Բարձրագույն դատական խորհրդի որոշումները՝ օրենքով նախատեսված դեպքերում,

4) միջանկյալ դատական ակտերը՝ օրենքով նախատեսված դեպքերում,

5) արբիտրաժային տրիբունալների՝ դատարանի կողմից հարկադիր կատարման թույլատրված վճիռները կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ առանց նման թույլատրման,

6) դատարանի կողմից հարկադիր կատարման թույլատրված օտարերկրյա դատական ակտերը եւ օտարերկրյա արբիտրաժային տրիբունալների վճիռները,

7) Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի հիման վրա գործող միջազգային դատարանների եւ միջազգային արբիտրաժների ակտերը՝ այդ պայմանագրերով նախատեսված դեպքերում,

8) ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերի հիման վրա գործող միջազգային կազմակերպության (դրա մարմինների) որոշումները՝ այդ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում,

9) դատարանի կողմից հարկադիր կատարման թույլատրված՝ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները,

10) վարչական ակտերը՝ օրենքով նախատեսված դեպքերում,

11) նոտարական ակտերը՝ օրենքով նախատեսված դեպքերում,

12) գրավը պետության եկամուտ դարձնելու մասին դատախազի որոշումը,

13) հարկադիր կատարողի որոշումները՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում):

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Հայ առաքելական սուրբ եկեղեցին ո՞ւյն կերոյ է ընդունում կաթողիկոսին, ինչպես կաթոլիկները՝ Հռոմի պապին:

Սահակ Մարկոսյան, 58 տարեկան



ՊԱՏԱՍԽԱՆ. Կաթոլիկները Հռոմի պապին են ընդունում իբրեւ եկեղեցու գլուխ, մինչդեռ հայ առաքելականները Հիսուս Քրիստոսին են ընդունում իբրեւ եկեղեցու գլուխ: Ըստ կանոնագրքի՝ կաթողիկոսը ամբողջ աշխարհի Հայ առաքելական սուրբ եկեղեցու առաջնորդական թեմերի իրավասուն եւ պատասխանատուն է: Սակայն ո՛չ պապը, ո՛չ կաթողիկոսը անսխալական չեն. միայն Աստված է անսխալական: Կաթոլիկ եկեղեցին արտոնում է պապին ինքնուրույն հավատի հռչակագիր կազմել (վարդապետություն), մինչդեռ Հայ առաքելական եկեղեցին մյուս Ուղղափառ եկեղեցիների հետ համատեղ է որոշում հավատի հռչակագիրը տիեզերական ժողովներում:

Հայ առաքելական սուրբ եկեղեցի

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Արարատի մարզում բախվել են 19-ամյա պայմանագրային զինծառայողի «Kia Forte»-ն եւ «ՎԱԶ 2106»-ը. կա 1 զոհ, 1 վիրավոր:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 12 + 17 + 24 + 28
	Կոտայքի լեռներ	+ 11 + 16 + 23 + 27
	Կոտայքի նախալեռներ	+ 18 + 21 + 30 + 33
	Գեղարքունիք	+ 12 + 17 + 22 + 27
	Լոռի	+ 17 + 21 + 24 + 28
	Տավուշ	+ 18 + 21 + 25 + 28
	Արագածոտնի լեռներ	+ 11 + 15 + 23 + 27
	Արագածոտնի նախալեռներ	+ 17 + 22 + 30 + 35

	Արարատ	+ 19 + 22 + 33 + 36
	Արմավիր	+ 20 + 23 + 35 + 37
	Վայոց ձորի լեռներ	+ 11 + 15 + 23 + 27
	Վայոց ձորի նախալեռներ	+ 20 + 24 + 35 + 38
	Սյունիքի լեռներ	+ 11 + 15 + 20 + 24
	Սյունիքի նախալեռներ	+ 13 + 17 + 26 + 29
	Սյունիքի հովիտներ	+ 20 + 24 + 33 + 36
	Երեւան	+ 21 + 23 + 32 + 34

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **15.07.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*